ՆՈՐ-ԴԱՐ

№ 163 Ա. Ռ Ա. Ջ Ի Ն Տ Ա Ր Ի Հինգշաբթի 11 Հոկտեմբերի 1884 Հինգշաբթի 11 Հոկտեմբերի Ա. Ռ Ա. Ջ Ի Ն Տ Ա Ր Ի № 163

Տարեկան 10 ռուբլի. վեց ամիսը՝ 6 ռուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. Հասով՝ 5 կոպէկ.
Բաժանողը գտնվում են Թիֆլիսում մի քանի խմբագրատներ։

Խմբագրության հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Titlis, Rédaction „Nor-Dar“.

Թերթը հրատարակվում է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն ի դրամներով։ Յայտարարության վճարը բաժին 2 կ. բնակիչների համար՝ կրկնապատիկ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

«Նոր-Դար»-ին բաժանորդ են լրվում Հոկտեմբերի 1-ից մինչև 1885 յունվարի 1-ը, և բաժանորդագինը վճարում են 3 ռուբլի 50 կոպ. հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. Ընտրութեան իրաւունք։
Քրոնիկոն. — Լուրեր։ Լօռուայ վիճակը։ Նամակ Խմբագրին։
Թղթակցութիւններ. — Սըզնախից և Մօնպելիէից (Ֆրանսիա)
Գաղափարական. — Գերմանական ազգի մասին։ Լուրեր։
Հեռագիրներ։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 10 Հոկտեմբերի 1884

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ.

I.

Եւրոպայի սահմանադրական պետութիւնների ներքին կեանքում մի որոշ շարժումն է նկատվում, որը թէպէտև իրաքանչիւր պետութեան մէջ առանձնապէս և անկախ է երևան եկել, բայց դրա շարժառիթը ամենի համար էլ մէկ է։

Պէտք է ասենք, որ սահմանադրական պետութիւնների մէջ պետութիւնը պահպանվում և կառավարվում է մի օրէնսգիրք մարմնով, որին անուանում են — պարլամենտ։ Այդ պարլամենտը բաղկացած է երկու առանձին ժողովքից, որոնք իրաքանչիւր պետութեան պատմական ու քաղաքական կեանքից առաջացած յատուկ հիմնական օրէնքներով միմեանց հետ որոշ յարաբերութեան և սահմանների մէջ են դրված և որոշ անուններ են կրում։ Օրինակ Անգլիայում այդ երկու ժողովքները կոչվում են, մէկը՝ վերին տուն կամ լօրդերի տուն, միւսը՝ ներքին տուն. Գերմանիայում, մէկը՝ մեծամեծների տուն (հեռենհաուզ), միւսը՝ պատգամաւորների ժողով (բոլխստագ). Ունգարիայում, մէկը՝ մագնատների (բարձրագնուականներ) տուն, միւսը՝ պատգամաւորների ժողով. Ֆրանսիայում և Իտալիայում, մէկը՝ սենատ, միւսը՝ պատգամաւորների ժողով և այլն։

Ամեն սահմանադրական պետութիւնների մէջ առաջին ժողովների անդամները երկրի բարձր ազնուական այսպէս անուանեալ արտօնութիւններ վայելող դասից են, որոնք ժողովրդից չեն ընտրվում, այլ ժառանգական իրաւունքով պետութեան գլխից են նշանակվում (Ֆրանսիայում սենատի անդամների մի որոշ թիւը ընտրում են նահանգական ժողովները) մինչ ցմահ։

Դրանք իրաքանչիւր սահմանադրական պետութեան մէջ խիստ չափաւորող ոյժն են ներկայացնում, հակառակ պատգամաւորների ժողովներին, որոնք կազմվում են մի որոշ ժամանակի համար ժողովրդից ընտրած ժողովրդի ներկայացուցիչներից։

Սահմանադրական պետութեան մէջ իրաքանչիւր օրինագիծ պէտք է ուրեմն անցնի պարլամենտի այդ երկու ժողովների միջից, սկսելով պատգամաւորների ժողովից։ Պատահում է, որ այն օրինագիծը, որին պատգամաւորների ժողովը իր հաւանութիւնը տուել է, միւս բարձր ժողովը (մէկ տեղ՝ լօրդերի տունը, միւս տեղ՝ սենատը....) մերժում է, չէ ընդունում, այսպիսով օրինագիծը օրէնքի ոյժ չէ ստանում, անգործադրելի է մնում, որովհետև օրինագիծը այն ժամանակ միայն օրէնքի ոյժ է ստանում, երբ պարլամենտի երկու ժողովից էլ ընդունվում է։ Երկու ժողովների մէջ ծագած տարաձայնութեան ժամանակ իրեն վիրաւորած և բռնաբարուած համարողը միշտ պատգամաւորների ժողովն է։ Նախ, որ օրինագիծը սրբանից է գնում միւս ժողովը, երկրորդ, որ պատգամաւորների ժողովը, իրեն ժողովրդի կամքի ուղիղ ներկայացուցիչն ճանաչելով պնդում է, որ բարձր ժողովը նրա ընդունածը ինքն էլ պէտք է ընդունէ, քանի որ այդ բարձր ժողովը իսկապէս ժողովրդեան կամքը չէ ներկայացնում, այլ մի որոշ դասի կամքը։

Ի հարկէ այդ բարձր ժողովների մի առանձին հակումն չունին հրաժարուելու իրենց իրաւունքներից և բռնած դիրքից, այդ հասկանալի է։ Միւս կողմից էլ բնական է, որ պատգամաւորների ժողովները ձգտեն այդ բարձր ժողովների—չափաւորող ոյժերի իրաւունքները չափաւորելու։ Այսպէս նկատվում է ներքին շարժումն ինչպէս Անգլիայում, նոյնպէս Ունգարիայում, Իտալիայում, Ֆրանսիայում... որի շարժառիթն ամեն տեղ մէկ է,—վերակազմել բարձր ժողովը։

Պարլամենտի բարձր ժողովի վերակազմութիւնը աւելի հիմնովին առաջ տանելու համար հարկաւոր է, նախ՝ վերակազմել պատգամաւորների ժողովը, ժողովրդի ընտրութեան իրաւունքի շրջանը աւելի ընդարձակելով։

Մեր վերջին խօսքերը աւելի պարզ կը լինի, երբ ասենք, որ պատգամաւորների ժողովի այժմեան կազմակերպութեամբ նրա վերայ ներգործութիւն ունի, թէպէտև անուղղակի, միւս բարձր ժողովը։

Ինչպէս ասացինք, պատգամաւորների ժողովի անդամների ընտրողը ժողովուրդն է։ Այդ ընտրող ժողովրդի վերայ ներգործում են բարձր ժողովների անդամները իրենց դիրքով, իրենց հարստութիւնով, երբ դրանք պատգամաւորների ժողովի համար պատգամաւորներ են ընտրում։

Որպէս զի դրանց ազդեցութիւնը պակասի և ժողովրդի կամքը աւելի ուժով երևան գայ, պէտք է, որ ժողովրդի ընտրութեան իրաւունքը ընդարձակուի, այլապէս՝ պետութիւնում պատգամաւորների ժողովի ընտրութեան մէջ ժողովրդի, նրա դասակարգերի աւելի մեծ մասը իրաւունք ստանայ ընտրութեանը, ուրեմն և անուղղակի երկրի կառավարութեանը մասնակցելու։

Մեր ընթերցողներից շատերը պիտի զարմանան, թէ ինչպէս, մթթէ սահմանադրական պետութիւնների մէջ ամբողջ ժողովուրդը ընտրելու իրաւունքից զուրկ է։ Այո, զուրկ է, էլ չենք թաւում միւս պետութիւնները, այլ նոյն իսկ քաղաքակրթուած և զարգացած Անգլիայում 30 միլլիօն ժողովրդից հազիւ թէ 3 միլլիօնը իրաւունք ունի ընտրութեանը մասնակցելու։

Գանի՛ քանի տարիների աշխատութիւն է հարկաւոր եղել, մինչև որ Անգլիայի ժողովուրդը կարողացել է իւր ընտրութեան իրաւունքը ընդարձակել մինչև—երեք միլլիօն։ Իտալիան վերջին տարիներումս հազիւ կարողացաւ ընտրութեան իրաւունքի ցենզը պակասացնելով մի փոքր ընդարձակել ժողովրդի ընտրութեան իրաւունքի շրջանը։

Անգլիայի առաջին մինիստր Գլադստոնը Անգլիայում ժողովրդի ընտրութեան իրաւունքը աւելի ընդարձակելու և լօրդերի կամայականութիւնը անուղղակի մի փոքր սանձահարելու համար ներկայացրել էր ընտրութեան վերանորոգութեան մի օրինագիծ, որը ներքին տունը, այսինքն անգլիական պատգամաւորների ժողովը ընդունել էր, բայց լօրդերի ժողովը ընտրութեան օրինագիծը մերժել էր և մերժում է։ Հասկանալի է թէ ինչու է մերժում։

Ուրեմն մենք տեսնում ենք սահմանադրական պետութիւնների մէջ, աւելի լուսաւորուած և քաղաքակրթուած ազգերի ներքին կեանքի մէջ մի շարժումն, որը ձգտում է ընդարձակել ժողովրդի ընտրութեան իրաւունքը, այլապէս՝ կարելոյն չափ ժողովուրդը աւելի մեծ քանակութեամբ մասնակից անել պետական կեանքին և նրան կառավարելու գործում։ Մենք այն էլ ենք տեսնում, որ ժողովրդի ընտրութեան մասնակցութեան իրաւունքի չրջանը պայմանաւորվում է նրա զարգացման չափով։

Ս. Ս.

Ս Զ Դ

Այն յարգելի բաժանորդներից, որոնք յունվարին պարտաւոր էին վճարել թերթի բաժանորդագինը, խնդրում ենք խոնարհաբար, որ այս հոկտեմբեր ամսում բարեհաճեն ուղարկել իրենց վերայ մնացած ապառիկները։ Հաւատացնում ենք, որ ինչպէս իրաքանչիւր գործում, նոյնպէս և ամենօրեայ թերթի հրատարակելիս ոչինչ ձրի չէ տրվում։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՐՄԱՒԻՐԻՑ. Մեր քաղաքը Կուբանեան նահանգի մէջ գրեթէ ամենից բազմամարդը և վաճառաշահն է։ Այստեղ 600 տուն հայեր կան, բոլորն էլ ազգային եկեղեցուն պատկանող։ Ժողովուրդը մխիթարից հետ անկեղծ և սիրով է. օտար երկրացի հաւատակիցները մանաւանդ շատ սիրվում են սրանցից։ Միայն դպրի մայրենի լեզուն և եկեղեցին քիչ տառն են վերաբերվում։ Դրա պատճառն էլ տեղւոյս հոգևոր հայրերին պէտք է վերագրել, Աբմաւիրը ունի մի հատ եկեղեցի սուրբ Աստուածածին անուամբ, որը շատ ողորմելի դրութեան մէջ է։ Շինուածքը շատ տեղերից ճաքճքած և խարխլուած է. անձրև եկած ժամանակ ջրերը վազում են եկեղեցու մէջ. սեղանը և պատկերները գրեթէ միշտ փոշոտած են և անմաքրութիւնը առհասարակ տիրում է ամեն կողմ։ Բայց չը նայելով այս ամենին, եկեղեցւոյ քահանաները, որոնք Թուով 4 են, խիստ փութաւոր և ճաշակով են հագնըվում։ Մենք կարծում ենք, որ հագուստի մաքրութեան հետամուտ քահանան մի փոքր էլ եկեղեցւոյ մաքրութեան վերայ պիտի մտածէ։ Այստեղ կան քահանաներ, որոնք իրենց վարմունքով գայթակղեցնում են ժողովուրդը և տգէտ ամբոխին աւելի հեռացնում եկեղեցուց։

—

Մեզ լսնդրում են հրատարակել հետևեալը. Լսում ենք, որ պ. դերասան Տէր Դաւթեանցը այս քանի օրերս ուղևորուելու է Բագու և իւր հետ տանելու է օրիորդ Աբշալոյսին, տիկնին Սարգսեանցին, պ. պ. Աւալեանցին, Աղայեանցին և Սարգսեանցին, Բագուայ Թատրոնասէրների հետ միասին ամբողջ ձմեռ ներկայացումներ տալու նպատակով. և ինչպէս լսում ենք, պ. Տէր Դաւթեանցը այդ ներկայացումներից գոյացած արդիւնքի մի մասը յատկացնելու է Մարդասիրական Ընկերութեան օգտին. ցանկանում ենք պարոն Տէր Դաւթեանցին յաջողութիւն. յուսով ենք, որ Բագուայ յարգելի հասարակութիւնը իւր այցելութեամբ կը խրախուսէ և կը քաջալերէ յիշեալ խմբին, միևնոյն ժամանակ աչքի առաջ ունենալով և Մարդասիրական Ընկերութեան օգուտը։

—

Մեզ հաղորդում են. Ամսոյս 11-ին, հինգշաբթի, նախկին Աբծրունու Թաղրոնում, հայ դերասանական խումբը կը ներկայացնէ առաջին անգամ „Քամու բերածը քամին կը տանէ“ կամ „Ագահութեան զօհ“, կօմէդիա 4. գործողութեամբ և 6 պատկերով, հեղինակութիւն պ. Յովսէփ Ստեփանեան Գարունբէգեանցի. անդքը պատահում է Թիֆլիսում 1874 Թուին։

ԼՕՌՈՒԱՑ ՎԻՃԱԿԸ.

—

Եթէ պարբերական հրատարակութիւնների մէջ Լօռուց տալիս են Թղթակցութիւններ, այդ լինում է գլխաւորապէս Ջալալ-Օղլուց և իսկապէս այդտեղ այնքան խառն հարցեր կան, որոնք կարծես թէ սպասում են բարեխղճ Թղթակիցների պարզելուն ժամուլի մէջ։ Ջալալ-Օղլու մասին վերջը առիթ կունենամ մի Թեթև ակնարկ ձգել ընդհանրապէս Լօռուայ գիւղերի վերայ։ Լօռին ներկայումս կազմում է Բորչալուի նահանգի մի պրիստաւութիւն. բաղկացած է 36 մեծ և փոքր հայաբնակ գիւղերից և այդ տարածութեան մէջով ոռոգելով անցնում է Դըբէթ (կամ Զորագետ) գետը։

Անցնելով Լօռուայ գիւղերով, ահա, ընթերցող, ինչ պատկեր է ներկայանում համարեայ ամեն տեղ։ Հրաշալի բնութիւն, կանաչազարդ դաշտեր, խորը ձորեր, ընդարձակ մարգագետիններ, վայրենի անտառ, բայց գիւղացին ապրելով դեռ ևս պարզ նահապետական կեանքով, իւր հին գութանով՝ չթով և ապրուստի եղանակով շատ քիչ է օգտվում այն բնութիւնից, որը իւր մէջ պարունակում է մեծ հարստութիւն։

Յաղթանդամ առողջ լօռեցին դեռ ևս ապրում է գետնափոր տներում, իւր սիրելի գոմշուվների և տաւարի հետ։ Ինչքան ժողովուրդը նուիրուած է երկրագործութեան, ինչքան սիրում է նա այդ արհեստը, այնքան նա մեծ դժուարութիւն է զգում հողի պակասութեան մէջ։ Կտեսնէք երկու եղբայրներ միմեանց գլուխ են ջարդում հոգսելիներով և եղաններով—պատճառը մի կտոր վարելահող է։ Կտեսնէք գիւղացին գիմաւորում է կալուածատիրոջ իրան ոյժից վեր պարգևներով (գուցէ պարտքով է գնած). նրան հլու հպատակ, գրեթէ ստրուկ է դառնում, և պատճառը այն է, որ մեղմանայ կալուածատիրոջ ամուր սիրտը և նրան մի կտոր վարելահող տայ։ Քանի՛ քանի ընտանիքներ գիտեմ, որոնք կրում են աղքատութեան դառն լուծը, նրանք ունեն ոյժ իրենց երակներում, սէր դէպի երկրագործական արհեստը, բայց ո՛չ է հողը, տուող չկայ։ Ուրեմն ինչո՞վ ապրի գիւղացին, ինչո՞վ կերակրի իւր բազմանդամ ընտանիքը... կարող էք երևակայել ընթերցող այդպիսի խեղճ ընտանիքների դրութիւնը։ Մի կողմից աղքատութիւնը, միւս կողմից ճանապարհների դժուարութիւնը պահել են լօռեցուն դեռ ևս տգիտութեան ճանկերի մէջ։ Բացառութեամբ մի քանիսի գիւղերը ընդհանրապէս գուրկ են ուսումնարաններից։ Ժողովուրդը գտնելով զարգացման ստոր աստիճանի վերայ, ներկայանում է մի տեսակ կրթի կով վարչների, մօլլաների առաջ։ Շատ անգամ լինէ պատահել է գիւղերում տեսնել այսպիսի տեսարաններ։ Ահա

Հայոց պատմության դասագրքերից մեկում կարդում ենք, որ Տրդատ Մեծի ժամանակ Հայաստանում եղել են 12 մեծ քաղաքներ, որոնցից մեկը Վաղարշապատն է եղել։ Ինչպես հայտնի է, Վաղարշապատը հիմնադրել է Վաղարշ թագավորը։ Ուրեմն, Վաղարշ թագավորից առաջ Վաղարշապատ քաղաքը գոյություն չի ունեցել։ Ուրեմն, Վաղարշ թագավորից առաջ Հայաստանում 12 մեծ քաղաքներ չեն եղել։ Ուրեմն, Տրդատ Մեծի ժամանակ

գտնտեսական ընկերութիւնները՝ այդ այգիները քննութեան ենթարկելու համար։ Սկզբանէ սրանք զանազան պատճառներ էին ենթադրում, ինչպէս (météor) օդային փոփոխութիւն, խոնաւութիւն, երաշտութիւն, հողի յոգնածութիւն, այգիների բազմութիւն և այլն և այլն։

Բայց 1868 թ. երևելի բուսաբան պ. Պլանչոնը առաջին անգամ նկատեց որ թերի արմատների վերայ մինչև այն ժամանակ անյայտ մի փոքր որդուկներ և որին նա անուանեց Phyleoxera (Ֆիլօքսերայ) Vastatrixe (վաստատրիքս)։ Պրանից յետոյ վնասուած այգիներում գտնում են համարեայ միևնոյն բանը։

Այսպիսով վերջապէս կարողացան այդ սխուր երևոյթի պատճառը գտնել։ Իմացան, որ այգիները հիւանդ են, այլ ծածկուած են մի փոքր միջատով (պարազիտով), որը երէկ ոչնչացնես որթերը կաւազնձանան։

Դիւզանտեսների համար յարուցուեցաւ մի նոր հարց. Թէ արդեօք հնարելից է այդ միջատն, որին կարելի է միայն տեսնել խոշորացոյցով, և որը ահագին տեղ է բռնել։ Այդ պատճառով բազմաթիւ միջատաբանները սկսեցին հետազօտութիւնները և վերջապէս կարողացան գտնել, որ այդ մէջատները Ամերիկայից են բերուած Ֆրանսիա։ Եւ նոյն իսկ էլ, որտեղ ամերիկական որթը տարածուած է, այնտեղ էլ այդ միջատները կան։

Բացի Ֆրանսիայի հարաւային կողմերը, վնասուած են և Լանգուկի ջերմատներները, Դերմանիայի, Աւստրիայի, Շուիցերիայի և այլ տեղերի այգիները։

Այժմս էլ տարուց տարի Ֆիլօքսերայի վնասը աճում և զօրանում է ոչ միայն Ֆրանսիայում և յիշեալ տեղերում, այլ և շատ ուրիշ երկիրներ, որոնք բաւականի հեռի են այստեղից. և կարելի է ասել, որ այժմս Եւրոպայի այգիները վտանգի մէջ են Ֆիլօքսերայի պատճառով։

Phylloxera-Ֆիլօքսերան (այսինքն, տերև չորացնող) պատկանում է Hémiptère (կիսաթիւ) կարգին – Ֆիլօքսերայի դասակարգից։

Ֆիլօքսերան երկու գլուխ ձև ունի. Թևաւոր և առանց Թևի։

Միջատաբանները այժմս գտել են մինչև 25 տեսակը, որոնց 4—5 տեսակը Եւրոպական է, իսկ 20-ը ամերիկական, և որոնք բնակվում են որթի, կաղնի և ընկոյզի ծառերի վերայ։

Ինչպէս վերև յիշեցինք, կարող Ֆիլօքսերան կամ Ֆիլօքսերա կատաստրիքս 1868-ին պ. Պլանչոնը առաջին անգամ գտաւ որթի արմատի վերայ։

Ֆիլօքսերան կարելի է դասակարգել (polymorphes) պլոլիմորֆների շարքում այնինքն բազմաթիւ ձևափոխութիւններ ունեցողների շարքում։ Նա ձուից դուրս է գալիս համարեայ բոլորովին կազմակերպուած, վեց հատ ոտքով և բազմաթիւ կապերով, ունի երկու ակնոցներ և մի ծծուարան կամ կնճիթ (Suçoir)։

Ֆիլօքսերան չորս ձևափոխութիւններ ունի, որոնք են.

1-ն ձև Gallicole կամ բօրաբիը, որի ձուի Թիւն է 200-ից մինչև 600։

2) — Radicicole կամ արմատի Թելերի վերայ բնակուող 1-ից մինչև 100 ձու։

3) Ailée կամ Թևաւոր 1-ից մինչև 6 ձու։

4) Sexue կամ սեռաւոր միայն մի ձու։

Այս չորս տեսակներն է, որով անցնում է Ֆիլօքսերան։

Առաջին երեք տեսակները ձուն ածում են առանց յարակցութեան, իսկ վերջինը, այսինքն սեռ ունեցողը,—ամենակատարելագործուած տեսակն է և ունի յարակցութիւն իւր ձուն ածելու համար։

Լաւ հասկանալու համար մենք կ՚սկսենք ձուից։

Ֆիլօքսերայի ձուն (¹/₁₀ millimétr) փոքր ձուակերպ, ածած բոպէն դեղնագոյն, իսկ երկու օրից յետոյ մուգ և հատուածակերպ է։ Ձուի բանվում ժամանակը կարելի է խոշորացոյցով լաւ տեսնել նոր որդի զանազան ձևերը։

Ձուի բացուելը լինում է 8 օրից յետոյ և հարկաւոր է, որ հողի տաքութիւնը 10 աստիճան լինի։

Հարկաւոր է լաւ ուշք դարձնել նրա կինճիթին, որով նա վնասում է որթը. դա մի մեծ, համարեայ իւր մարմնի երկայնութեամբ, գործիք է, որով նա ծակում է արմատի կեղևը և հասնում ամենաքնքոյշ մասը, որտեղից նա սկսում է ծծել որթի հիւթը։ Հինգ օրից յետոյ նորածին Ֆիլօքսերան ենթարկվում է առաջի քնին կամ մորթեփոխութեանը, յետոյ երկրորդ և վերջապէս երրորդ քնին, որից յետոյ որթը սկսում է ձու ածել։ Ամեն մի քունը տևում է 3 կամ 5 օր։ Ուրեմն ձու ածող որդը 12 կամ 15 օրեկան է, Ձուն նա ածում է արմատի վերայ, այստեղ այնտեղ օրեկան 3-ից մինչև 6. այդ Թիւը կախուած է եղանակից։ Երբ եղանակը 10° ցածր է, որդը ձու չի ածում։ Կարծում են, որ այդ էգ որդը (radicicolu) մօտ երկու ամիս է ապրում, այսինքն 40 կամ 45 օր։ Ֆիլօքսերան կարող է ձու ածել, օրն ածում է 30-ից աւել։ Դարունքին բոլոր ձու ածող որդները ոչնչանում են, բայց նորերը, որոնք դեռ չեն ենթարկուել քնի կամ մորթեփոխութեանը, վաԹամԹվում են իրենց մորթու մէջ, ձմեռն անցկացնելու համար։ Ուստի հասկանալի է, որ իւրաքանչիւր որդ, տալով մի ձու, որն մի քանի օրից յետոյ տալիս է ուրիշ ձուանք և ամեն մի Ֆիլօքսերան ածիւով 200 կամ 250 հատ, մինչև մի շարաթ նրանց Թիւը կը բազմանայ, այնպէս որ սկզբից մինչև վերջը (15 սեպտեմբերի վերջը) մի ձուն կ՚արտագրի մի քանի միլիօն հատ։ Եթէ հաշուես, 1000 ձուն մէկ տարուայ մէջ կարող է ծածկել մի դեսեատին հող, եթէ մեմեանց մօտ շարես, բայց եթէ այդ ձուանքը մի քանի հազարներով լինին, ուրեմն հասկանալի կը լինի, Թէ ինչ տարածութիւն կարող են ծածկել նրանք։ Ինչպէս վերև յիշեցինք, ձու ածող մայր որդները ոչնչանում են աշունքին, բայց նորածինները մնում են ձմեռն անցուցանելու համար։ Դարունքին իւրաքանչիւր ձու զարԹնում է, ենԹարկուելով մի քանի ժամանակ ձևափոխութեանը, որից յետոյ կայսրը և Սաքսոնիայի Թագաւորը այցելեցին Մլեանին։ Վերջինս յետոյ այցելութիւն արաւ Սաքսոնիայի Թագաւորին, որից յետոյ կայսրը և Սաքսոնիայի Թագաւորը այցելեցին Մլեանին. բացի այդ նրան նոյնպէս այցելեց Պրուսաց պրինց Վիլհելմը։ Շեռնբրունում այսօրուայ հանդիսաւոր ճաշին ներկայ էին՝ Սաքսոնիայի Թագաւորը, պրինց Վիլհելմը, գրաֆ Կալնոկին և պրինց Բիսմարկ գերմանական գեսպանութեան մեծ անդամների հետ։

—

Անգլիայում չափազանց դժգոհ են, որ Եւրոպայի ինքնակալների խորհրդակցութիւնները, որ, ինչպէս վերջին սիկերնեվիցեան տեսակցութեան ժամանակ, տեղի են ունենում Թագուհու կողմից առանց ներկայացուցչի մասնակցութեան։

Փարիզի „Հաւասի գործակալութիւնը“ հաղորդում է, որ այդ առԹիւ արդէն քանի ժամանակ է բանակցութիւնները են լինում վինդզօրեան արքունիքի և Պլազտօնի մէջ։ „Վիկտորիա Թագուհին, ասվում է այդ հաղորդութեան մէջ, առանց դժգոհութեան չի կարող նայել այն բանի վերայ, որ օտար կայսրների խորհրդակցութիւնները, որոնք կազմվում են Եւրոպայի հասարակաց միտքը զբաղեցնող հարցերը քննելու համար, տեղի են ունենում առանց Մեծբրիտանիայի Թագուհու կամ գահաժառանգի մասակցութեան. մինչդեռ այդ խորհրդակցութիւնների ժամանակ՝ չոշափվում են և երբեմն վճռվում են եւրոպական հաւասարակշռութեան հարցերը, որոնք չափազանց մեծ նշանակութիւն ունեն անգլիական քաղաքականութեան համար աշխարհի բոլոր մասերում, առանց Թագուհու-կայսրուհու համաձայնութեան։ Այժմս անգլիական կառավարութեան մէջ ցանկութիւն է զարԹել, առանձին օրէնքի միջոցով ընդլայնել պրինց Ուէլսի լիակատար իշխանութիւնը, որ արդէն բազմիցս ապացուցել է իւր անձնուիրութիւնը Անգլիայի շահերին և իւր ընդունակութիւնները, որպէս զի միջոց տրուի նրան մասնակցելու ինքնակալների խորհրդակցութիւններին, երբ այդպիսիք տեղի կունենան Ինչպէս ասում են, շուտով այդ մտքով վճիռ տեղի կունենայ։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

„ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

9 Հոկտեմբերի.

Մոսկուա. Բացի Սօլօդովնիկովի շինութեան 67 խանութներից՝ բոլորովին այրուել են և ս 10 հարևան խանութներ Պետրովկում, Կուզնեցկի կամուրջի վերայ և Նեգլինի ճանապարհի վերայ. ըստ որում Խլեբնիկովի խանութից ոսկեայ և արծաթեայ իրերը յաջողեցաւ ազատել։ Հրդեհի պատճառած վնասը հասնում է մինչև երեք միլիոն րուբլու։

Կայիրօ. Խեդիվի ընդդիմադրելու պատճառով, Նորսբրուկի նախագիծը՝ խափանել եգիպտական զօրքը, չի կայանալ. մտադիր են միայն պակասացնել զօրքը մինչև 3000 մարդ։

Լօնդօն. Անգլիան համաձայնուել է սկզբունքով մասնակցել Կոնգոյի հարցի մասին կոնֆերէնցիային։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ.

9 Հոկտեմբերի.

Լօնդօն—24⁹/₁₆, 24⁵/₈։ Համբուրգ—209, 209¹/₂։ Փարիզ—258¹/₄։ 258¹/₂։ Պօլուիմպերիալը—8ր. 6կ., Արծաթը—1. ր. 35 կ.։ Պետական բանկի 5% տոմսեր. 1-ին շրջանի —98³/₄ ր., 2-րդ—97¹/₂ ր., 3-րդ—97¹/₄ ր., 4-րդ—97 ր. 37 կ., 5-րդ—97 ր. 37 կ.։ Արևել. փոխառութ. 100 և 1000 րուբ. 5% տոմսեր. 1-ին շրջանի—95ր., 2-րդ —95ր., 3-րդ—95ր.։ Վիճակահանութ. տանող 5% տոմսեր. 1-ին շրջանի—218 ·.ՈՒ 2-րդ— 207¹/₄ր.։ Նոր փոխառութիւնը—143ր. 12կ.. Պետերբուրգի բօրսային տրամադրութիւնը ամուր է։

ԴԵՐ ԵԻ ԴԷՄ

Օդեսսա, 29 սեպտեմբերի. Պատուական լրագրողդ տարուայ 151 համարի մէջ մի յօդուած կարդացի Օդեսսայից գրուած ինձ դէմ զրպարտութեամբ լի, որուն համեմատաբար պատասխանում եմ՝ Ճշմարտութիւնը երևան հանելու համար։

Սկանից քանի տարիներ առաջ Նիկօլայեվ քաղաքի մէջ բնակուում էր աստրախանցի հայազգի Թովմաս Եսայեան Նազալովեան, աստիճանաւ մայոր. այս անձը բաւականին հարուստ էր և ժառանգ չունէր, ուստի իրրև սրբազան պարտաւորութիւն՝ պատահելիս միշտ չեշտեցնում էի նրան, որ իւր կարողութեան գէԹ մի մասը ընծայէ տեղւոյս եկեղեցուն կամ ուսումնարա-

նին. բայց նա խոստանում էր և խոստմունքը մնում էր խոստմունք. Ի վերջոյ 1878 Թուի մարտ ամսին ինձ հետ առնելով նախկին երեցփոխան պ. ՊաւլիԹ Խալայճեանցին և պ. Հոգաբարձու Գրիգոր Աբգարեանցին՝ գնացինք միասին Նիկոլայեվ քաղաք և ներկայանալով վերոյիշեալ անձին, յայտնեցինք մեր գնալու նպատակը, և յորդորելով խնդրեցինք, որ մի գումարնուիրէր, կամ ուսումնարանին և կամ եկեղեցուն։ Սա վերջապէս խոստացաւ կտակել 7000 րուբլ. տեղւոյս եկեղեցու զանգակատան շինութեան, որև կատարեց արդարև խոստումը կատակաւ, կարգելով կտակատար իւր մահից յետոյ առաջին ամուսնու ազգականին, որը ազգաւ յոյն էր։ Նայվալեանցն նոյն տարուայ յունիս ամսում վախճանուելով, հոգաբարձութիւնը կտակի գործութեան համաձայն մեծ դժուարութեամբ ձեռք բերաւ դեռ անցեալ տարի այդ գումարը, և դրաւ Ի շահեցողութիւն կայսերական բանկին։ Իսկ այս տարի մարտ ամսին հոգևոր իշխանութիւնը վճռեց տեղւոյս պատուելի երեսփոխանին յատակագծի համաձայն շինել զանգակատունը խորհուրդով և գործակցութեամբ հոգաբարձուաց, որի անդամներից մինն էլ դժբաղդաբար գտանվում եմ նուաստս։ Ուստի գտնվից յետոյ մեծ դժուարութեամբ և արգելքներով ամեն կողմից հազիւ հազ կարողացանք, մի ամիս շինութիւնը դադարեցնելից յետոյ՝ գործը յառաջ տանել, և ողորմութեամբն Աստուծոյ չորս ամսուայ մէջ կարողացանք գրսից բոլորովին վերջացնել շինութիւնն, Թողնելով միայն մէջի պահաստրդները, մինչև պատերի չորանալը։ Բայց որովհետև երեսփոխանն միշտ չէր կարող ներկայ լինել շինութեան, այդ պատճառաւ խնդրած էր ինձ վերահասու լինել Թէ գործաւորաց և Թէ կառավարչաց վերայ. իսկ ես ինձ սըրբազան պարտք համարելով չանձնառու եղայ և միշտ հսկում էի շինութեան, մանաւանդ այն անտանելի շոգերին, երբ զրպարտիչն իւր քնով հանգըստանում էր, իսկ ես չարչարվում էի, որ յետոյ լրագրի միջոցաւ շնորհակալութեան փոխարէն, անարգանք և զրպարտութիւններով հատուցումն ստանայի. բայց դրանով ես չեմ Թուլանում, որովհետև մի օր Ճշմարտութիւնը կը յայտնուի, իսկ ստախօսը կը կարմրի։

Վերջապէս հրաման խնդրելով հոգևոր իշխանութիւնից, Աստուածածնայ օրը հանդիսաւոր ժամասացութիւն արինք, միայն համաձայն հրամանին՝ օրինաւոր օծումն Թողեցինք շինութեան աւարտումից յետոյ, և միջի պատերը Թաց լինելուն պատճառաւ, երկու շաբաԹի չափ շինութիւնը դադրեցրինք, իսկ ժամասացութիւնը գնում էր իւր կարգին։ Այժմս չորանալով պատերը, արդէն գործաւորները սկսան Թէ միջի պահաստրդները լրացնելու և Թէ ներկել և այլն, որ հազիւ հազ մի ամսից պատրաստ կը լինի. և այս պատճառաւ անկարելի եղաւ երկու շաբաԹ եկեղեցւոյ աւագ դուռը, ինչպէս գրում է Օդեսացին, բանալ. ուստի և կիւրակէ օրերը ժողովուրդը մտնում էր եկեղեցու հարաւային դռներից։ Մի Թէ այդ դռները երեն յատնի չէր, և կամ ուրիշներին. և Թէ որ ժողովուրդը այդ երկու շաբաԹուայ միջոցին գրկուել է հոգևոր մխիԹարութիւնից։ Ճշմարիտն ասած՝ մեր ժողովուրդը առհասարակ սակրիչներից է բաղկացած, որոնք և կիւրակէ օրերը անկարող են եկեղեցի գալ, իսկ մնացեալ ժողովուրդն էլ հազիւ տարին երեք չորս անգամ եկեղեցի է գալիս. այստեղ եկեղեցի յաճախողները մի քանի օտարական հայեր են և մի քանի կանայք, որոնց ամենուն էլ լաւ յայտնի էր եկեղեցու մուտքը։ Այդ զրկեալները ինչու չեն գալիս, մի ամիս է դռները բաց, առաւօտուանից

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Վիէննայից, հոկտեմբերի 10-ից (Նոր տում.) հաղորդում են. Կայսրը այսօր ընդունեց սերբիացւոց Թագաւոր Միլանին. Վերջինս յետոյ այցելութիւն արաւ Սաքսոնիայի Թագաւորին, որից յետոյ կայսրը և Սաքսոնիայի Թագաւորը այցելեցին Միլանին. բացի այդ նրան նոյնպէս այցելեց Պրուսաց պրինց Վիլհելմը։ Շեռնբրունում այսօրուայ հանդիսաւոր ճաշին ներկայ էին՝ Սաքսոնիայի Թագաւորը, պրինց Վիլհելմը, գրաֆ Կալնոկին և պրինց Բիսմարկ գերմանական գեսպանութեան մեծ անդամների հետ։

—

Անգլիայում չափազանց դժգոհ են, որ Եւրոպայի ինքնակալների խորհրդակցութիւնները, որ, ինչպէս վերջին սիկերնեվիցեան տեսակցութեան ժամանակ, տեղի են ունենում Թագուհու կողմից առանց ներկայացուցչի մասնակցութեան։

Փարիզի „Հաւասի գործակալութիւնը“ հաղորդում է, որ այդ առԹիւ արդէն քանի ժամանակ է բանակցութիւնները են լինում վինդզօրեան արքունիքի և Պլազտօնի մէջ։ „Վիկտորիա Թագուհին, ասվում է այդ հաղորդութեան մէջ, առանց դժգոհութեան չի կարող նայել այն բանի վերայ, որ օտար կայսրների խորհրդակցութիւնները, որոնք կազմվում են Եւրոպայի հասարակաց միտքը զբաղեցնող հարցերը քննելու համար, տեղի են ունենում առանց Մեծբրիտանիայի Թագուհու կամ գահաժառանգի մասակցութեան. մինչդեռ այդ խորհրդակցութիւնների ժամանակ՝ չոշափվում են և երբեմն վճռվում են եւրոպական հաւասարակշռութեան հարցերը, որոնք չափազանց մեծ նշանակութիւն ունեն անգլիական քաղաքականութեան համար աշխարհի բոլոր մասերում, առանց Թագուհու-կայսրուհու համաձայնութեան։ Այժմս անգլիական կառավարութեան մէջ ցանկութիւն է զարԹել, առանձին օրէնքի միջոցով ընդլայնել պրինց Ուէլսի լիակատար իշխանութիւնը, որ արդէն բազմիցս ապացուցել է իւր անձնուիրութիւնը Անգլիայի շահերին և իւր ընդունակութիւնները, որպէս զի միջոց տրուի նրան մասնակցելու ինքնակալների խորհրդակցութիւններին, երբ այդպիսիք տեղի կունենան Ինչպէս ասում են, շուտով այդ մտքով վճիռ տեղի կունենայ։

մինչև երեկոյ ամեն օր, որովհետև գործաւորները աշխատում են։

Նմանապէս սուտ է այն լուրն երբև թէ ծախքերն ես արած չինուածքեան. ես միմիայն հաշիւ պահում էի մտից և ելից, այն ևս երեսփոխանի հայերէն չիմանալուն պատճառաւ, իսկ ծախքը բոլորը ինքն, երեսփոխանն էր անում, իսկ գալով քարի մասին, երբև թէ փորագրել եմ տուել իմ անունս „գործակալ", առանց հարցնելու օգնացուին, այդ մասին վկայ են գրողները, և փորագրողը, որովհետև շինուածքեան աւարտելու ժամանակ չի-շեցի երեսփոխանին որ Նացվալօվի անունը գրել տայ զանգակատան տակ երբև յիշատակարան, իսկ նա գրել տուած է յիշատակարանին մէջ այսպէս „Զանգակատունս շինեցաւ արդեամբք հանգուցեալ մայոր Թովմայի Եսայեան Նացվալօվեանց յամի 1884 յՕգեստա".

Գործակալութեամբ երեսփոխան Ց. Աղիքովի և Գրիգոր քահանայի Խորասանճեանց, որ նշանակում է ոչ թէ գործակալ են Օգեստայի, այլ նրանց աշխատութեամբ շինուել է։

Իսկ ինչ կը վերաբերի իմ ընդդէմ քահանայական սուրբ կոչման արած պակասութիւններիս, այդ կը թողում Հ. Եշխանութեան արդար դատաստանին։

Գրիգոր քահանայ Խորասանճեանց.

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսան
«ՎԱՐԺԱՐԱՆԻ» №№ 7, 8, 9, և 10
հետևեալ բովանդակութեամբ.

«Վարժարանի» վերջնական դադարումը.- Խմբագրութեան կողմից։- Մեր դպրոցականղեկավարների գործունէութեան առթիւ.— Խմբագրութեան կողմից։— Քաղաքական Եւրոպան, — Ֆիզիքական աշխարհագրութեան գործադրութիւնը պատմութեան և քաղաքագիտութեան ուսումնասիրութեան մէջ.— Հետազօտութիւն Լիւդովիկ Դրապերօնի.— Ս. Պալասանեան։—Մօլիէր երբե՞րգիծաբան և մարդ.—Թարգ. Փ. Վարդանեան։— Մանկական պարտէզները Միացեալ-Նահանգներում.—Ս. Պալասանեան։— կնոջ կոչումը և դաստիարակութիւնը,— Լուիզա Բիւխների,— Թարգ. Գ. Շահբուդաղեան։— Ոսկէ կձկիկ.--բանաստեղծութիւն Պուշկինի, Թարգ. Գամառ-Քաթիպա։— Բանասիրական՝ Հոգեբանութեան նշանակութիւնը կրթութեան գործում.— Մ. Կիւլլի բէֆերատից քաղուածք.— Թարգ. Գ. Շահբուդաղեան. Տէլլուրիումի գործածութիւնը փիզիքական աշխարհագրութեան դաստատութեան ժամանակ.— Լօրդ։— Այլ և Այլք.— Յայտարարութիւններ։—

Խմբագիր-Հրատարակիչ՝ Ն. Խոսրովեան։

Հիւանդանոցի դիրեկտօր Գ. Վերմիշովը այսու յայտարարում է, որ Թիֆլիսի քաղաքացիների հիմնած երթևեկ հիւանդների համար հիւանդանոցում մտցնվում է օրապահութիւն պ. պ. բժիշկներից և մանկաբարձուհիներից

ԲԺԻՇԿՆԵՐ.

Յարութիւնեանց, — երկուշաբթի, հինգշաբթի և կիւրակի.
Կօրօնա,—երեքշաբթի և շաբաթ,
Մելիք-Փարսադանով,--չորեքշաբթի և ուրբաթ.

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻՆԵՐ.

Ֆիլչակով,—երեքշաբթի.
Բաղինով,—երկուշաբթի և ուրբաթ,
Ստեփանով, — չորեքշաբթի և և շաբաթ։
Լօկշ,—հինգշաբթի և կիւրակի,
Հիւանդանոցի դիրեկտօր՝
Կօլլեժսկի Սօվետնիկ Վերմիշով.

ԱՂԲԻՒՐ

Լոյս տեսաւ № 10 (հոկտեմբեր) և ուղարկուեց բոլոր բաժանորդներին։

ԲՈՎԱՆԴԱԿՈԹԻՒՆ

№ 10

Ոսկու աղբիւր (Ոտանաւոր).	Սրինգ
Հսկայ մրջիւն (Շարունակութիւն և վերջ) . . .	Տ: Գիւզալեանց
Ֆրիդովսի (Հայնէից բանաստեղծութիւն) . . .	Րաֆֆի
Փրիդովսի (Շարունակութիւն և վերջ)	Րաֆֆի

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Կենդանիների լեզուն. Փոխադր. . . . . Լևոն Մ.—Ա.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս տարուայ անձրևային լինելու պատճառը.
Ջորջ Դարվինի հետախուզութիւնը մարդուս շրջանաձև թափառելու մասին։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Զարթուցիչ.
Մի լաւ դաս.

ԶՈՒՄԲԱԼԻՔ

Հանելուկներ (7 հատ)
Թուաբանական խնդիր։
Թուագրիճ։
Անեկդօտ։
Երգ նօտաներով (Երբոր լեզուս բացուեցաւ)։
Նախընթաց №№ 8—8-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը.

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՓՈՂԻ
ՓԱՅՏԵԱՅ ՅԱՏԱԿՆԵՐԸ,
սանդուղքները, դռները, լուսամուտները և տնային ամեն տեսակ փայտեղէն անօթները
ՄԱՐԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ.
շատ աժան մէջոց է և գործը չափազանց թեթևացնող։
Ր. ԿԵՕԼԵՐ և ԸՆԿ. ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ.
Նահանգներում. բոլոր դեղավաճառանոցներում և կօլօնիալ լանուվներում։ (Ц. 6) 5—2

ՆՈՐ ՊԱՀԵՍՏԻ ԲԱՅՈՒՄՆ
ՀԱՅԻ ՍՊԻՐՏԻ
ԵՒ
ՋՏԱԾ ՕՂԻՆԵՐԻ.
Վլադիկաւկազեան Սվետօ-Տրօիցկի տոհմական պատուաւոր քաղաքացի Իվան Ադամովիչ Պօրակովի և Դաւիթ Զախարովիչ Սարաջեվի ցքահանութեան գործարանի գրասենեակը այսու յայտարարում է, որ հոկտեմբեր ամսի 1-ից բացուած է Թիֆլիսում, Թամամշովի քարվանսարայում, Երևանեան հրապարակի վերայ, Ալելովի գրասենեակի շաքքում, հացի սպիրտի և զտած օղիների պահեստ։
Պահեստում կան մեծ քանակութեամբ հացի սպիրտ. սուրճից, լեկեօրից և պարզ ալկօհոլից, նոյնպէս և օղիներ՝ զտած, ճաշի համար, մաքրած և թագաւորական կոչուած բարձր յատկութեան։
Յիշեալ պահեստի սպիրտի և զտած օղիների մանրածախը լինում է Թիֆլիսում հետևեալ խանութներում.— Յակոբովի, Կօլօվինսկի պրօսպեկտի վերայ, Մուխրանսկու տանը, Մխիթարովի, Երևանեան հրապարակի վերայ, Իզմիրովի տանը, և Շաքիեվի, Սօլօլակում, Սմբատովի տանը, 1 վեդրանոց, ½ վեդ., ¼ վեդ., ¹/₁₀ վեդ., ¹/₁₆ վեդ., ¹/₂₀ վեդ., ¹/₄₀ վեդրանոց անօթներում, պահեստի եարլիկով և կնիքով։ «Մարկայ». «Վլադիկաւկազեան Սվետօ-Տրօիցկի ցքահանութեան գործարան, Թիֆլիսի պահեստից»։ Նոյն տեղերում մանրածախս կլինի մինչև 3 վեդրօ 1, ½ և ¼ վեդրանոց անօթներում, պահեստի գնովը։ Դները չափաւոր են. սպիրտի և օղիների պատուէրները պահեստը ինքն է հասցնում հասցէին։
Օտարաքաղաքացիք իրենց պահանջներով դիմում են հետևեալ հասցէով. Թիֆլիս, Իվ. Ադ. Պօրակովի և Դաւ. Զախ. Սարաջովի հացի սպիրտի պահեստը, Երևանեան հրապարակի վերայ։ 10—1.

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ԶԻՆԳԵՐԻ

Նիւ-Եօրկում

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԿ ՊԱՀԵՍՏԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳՏՆՎՈՒՄ Է ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏՈՒՄ, ՄԻՐԻՄԱՆՈՎԻ ՏԱՆԸ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԱՇԽԱՐՀԻՍ ՎԵՐԱՅ

Որը արժանացել է Ամստերդամի համաշխարհական հանդիսին 1883-ին

Միակ ամենաբարձր պարգևը պատուաւոր դիպլոմ

Մօտ օրերում ստացայ մեծ քանակութեամբ և աւելի կատարելագործուած զանազան տեսակ արհեստաւորների և ընտանեկան կարեմեքենաներ իրենց օգնական նոր դործիքներով և նոր ոտերով, որոնք առանց աղմուկի թեթևութեամբ բանում են, այնպէս որ ամենաթոյլ մարդիկ և ծերունիներն անգամ, առանց այժ գործ դնելու կարող են գործածել։ Այս մեքենաներից 1883 թ. ԾԱԽՈՒԵՑԱՒ մօտ 700,000 հատ, այնպէս որ անցեալ տարում աւելի շատ ծախուեցաւ քան թէ 1882 թուականում։ Սա ամենալաւ ապացոյցն է թէ ինչ լաւ յատկութիւն ունին ԶԻՆԳԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ։

Նախազգուշութիւն. Զինգերի իսկական կարեմեքենաները մեծ համբաւ ունին, որովհետև իրենց գեղեցիկ յատկութիւններով և ամրութեամբը զմայլեցնում են ամենքին և հենց այդ է պատճառը, որ ուրիշ գործարանատէրերը կեղծում են և Զինգերի իսկական մեքենայի անունով ծախում։ Այդ պատճառով անհրաժեշտ է դարձնել ձեր ուշադրութիւնը նրա վերայ, որ Զինգերի իսկական կարեմեքենաներից իւրաքանչիւրը կրելով անգլիական լեզուով «Մանուֆակտուրական Ընկերութեան Զինգերի» ֆիրման մեքենայի կոթի և մամուլի վերայ դրոշմուած են վերը դրած գործարանական մարկաները։ Զինգերի իսկական և օգտաւէտ կարեմեքենաները որ իւրաքանչիւր մարդ կարողանայ հեշտութեամբ ձեռք բերել, գնողները կարող են եթէ կամենում են դրամը հետզհետէ վճարել, այն է՝ շաբաթը 1 ր. 50 կ. կամ ժամանակմիջոց ստանալ դրամը վճարելու համար, առանց անսկսիզ գինը բարձրացնելու։ Հին մեքենան մաղազինում կարելի է փոխել։ Մեքենաները ունին նոյնպէս իրենց պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղներ, թել, մետաքս, մեքենայի իւղ և այլն և այլն։

ԹԻՖԼԻՍ, Գ. ՆԷՅԴԼԻՆԳԵՐ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏ, ՏՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՈՎԻ

Բաժանումներ. ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ, Ալէքսանդրեան փողոցի վերայ, տուն Զերէկովի, բուլվարի հանդէպ։ ԲԱԳՈՒԻ մէջ, Միքայէլեան փողոց, տուն Միրզա-Աւագովի։ ԲԱԹՈՒՄ, Պօլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-օղլի։ Այս մեքենաների մշտական պահեստներ գտնվում են նաև Ղարս, Ելիսաւէտապօլ, Ալէքսանդրապօլ, Շուշի, Պետրովսկ և Աստրաբադ քաղաքներում,

50—30

Дозволено цензурою. Тифлисъ, 10-го Октября 1884 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона, Гол. пр., д. № 12.